[1] Դուրս գրման ամսաթիվ		
30	Հունվար	2019 թ.
[4] Առաքման ամսաթիվ		
30	Հունվար	2019 թ.

Հաշիվ վավերագիր
(արտադրանքների, ապրանքների առաքման)

[2] Սերիա	[3] Համար
Բ	9439284156

Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
Սերիա	Համար

Ճշգրտվող հաշիվ վավերագիրի դուրս գրման ամսաթիվ		

Պայմանագիր

[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար
18 Հունվար, 2018 թ.	

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Արտադրանք, ապրանք առաքող անձի

[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 6 9 0 2 0 8 7
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	
[10] Անվանումը	«ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՑԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ» ՊԵՏԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)
[11] Բանկային տվյալները	"ԱՄԵՐԻԱԲԱՆԿ" ՓԲԸ — N 1570015001210100
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԼՈՌԻ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57
[13] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են	ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57
[14] Լրացուցիչ տվյալներ	

Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի

[15] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 2 6 3 1 2 6 3
[16] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	
[17] Անվանումը (ֆիզիկական անձի անուն, ազգանուն)	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ
[18] Բանկային տվյալները	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն — N 900011000834
[19] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5
[20] Լրացուցիչ տվյալներ	
[21] Ում միջոցով — Անուն, ազգանուն	
Լիազորագիր — Համար	
Լիազորագիր — Ամսաթիվ	
[22] Մատակարարման (առաքման) եղանակը	
[23] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն)	ԱՐԱԲԿԻՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5

[24] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	Ձեռչ(%)	Արժեքը	Այդ թվում՝ բնապ. հարկի	Այդ թվում՝ ակցիզ. հարկի գումար
1	2	3	4	5	6	7	8	9
1	Դատահոգեբուժական փորձաքննությունների փորձագիտական եզրակացություն թիվ 68108618բ/գ,	հատ	1	39400		39400		
Ընդամենը						39400		

Առաքող՝ KALANTARYAN GAYANE 7203510093
(անուն, ազգանուն)

Ստացող
(անուն, ազգանուն)

30/01/2019 10:18:49

ՈՐՈՇՈՒՄ

/Ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին/

« 21 » դեկտեմբերի 2018թ. գ. Ախուրյան

ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության Ախուրյանի քննչական բաժնի պետի տեղակալ՝ Ս.Օ.Մինասյանս, քննարկելով վարույթիս թիվ 68108618 քրեական գործի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

2018 թվականի հոկտեմբերի 16-ին ոստիկանության Շիրակի մարզային վարչության ծառայության տեսուչ Տիգրան Սահակյանը զեկուցագիր է ներկայացրել այն մասին, որ նույն օրը ժամը 15:00-ի սահմաններում Շիրակի մարզի Բասեն գյուղի բնակիչ Կամսար Գուրգենի Հովհաննիսյանը գնացել է ոստիկանության Շիրակի մարզային վարչություն և հերթապահ մասի մուտքի դռան մոտ վիրավորական արտահայտություններ և հայհոյանքներ է հնչեցրել իր և կրտսեր տեսուչ-հերթապահ Հարություն Հովսոյանի հասցեին, որից հետո չենթարկվելով իրենց օրինական պահանջներին ձեռքերով պոկել է հերթապահ մասի դիմացի պատին ամրացված փայտե անկյունակը ու բարձրացել է երկրորդ հարկում գտնվող վարչության պետի ընդունարան, որտեղ ևս աղմկել է և իր գործողություններով տևական ժամանակ խանգարել է ինչպես հերթապահ մասի, այնպես էլ վարչության մյուս ծառայողների բնականոն աշխատանքը:

Դեպքի առթիվ Շիրակի մարզային քննչական վարչությունում նախապատրաստվել են նյութեր:

Նյութերի նախապատրաստման ընթացքում Տիգրան Ժորայի Սահակյանը բացատրությամբ պնդել է իր կողմից ներկայացված զեկուցագրով հայտնած դեպքի հանգամանքները, նույնաբովանդակ բացատրություններ են տվել նաև ոստիկանության Շիրակի մարզային վարչության պետի օպերատիվ գծով տեղակալ Վահրամ Խաչատուրի Ենգոյանը, նույն վարչության կրտսեր տեսուչ հերթապահ Հարություն Միխայիլի Հովսոյանը և դեպքի օրը վարչությունում ծառայության ընդգրկված՝ ոստիկանության Գյումրի քաղաքի Մուշի բաժնի ՊՊԾ դասակի ոստիկան Վահան Հովհաննեսի Եսայանը:

Դեպքի վայրի զննությամբ պարզվել է, որ ոստիկանության Շիրակի մարզային վարչության առաջին հարկի միջանցքի ատիճաններից դեպի արևելք գտնվող հարավարևելյան պատերի անկյունը վնասված է՝ գետնից 16սմ և 149սմ դեպի վեր առկա են գաջապատ ծածկույթի և ներկածածկույթի վնասված տեղամասեր, իսկ նշված պատին գամերի միջոցով ամրացված փայտե, 179,5սմ երկարությամբ անկյունակը ամրացման տեղամասերից պոկված է:

Դատահետքաբանական և դատաապրանքագիտական փորձաքննության թիվ 358/301ապ-18 եզրակացության համաձայն՝ ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության վարչական շենքի միջանցքի պատի անկյունային հատվածի և ներկայացված փայտյա անկյունակի վրա առկա վնասվածքները մեխանիկական ներգործության հետևանք են և առաջացել են անկյունակը քաշելով տեղահանելու արդյունքում և կարող էին առաջանալ որոշմամբ շարադրված Տիգրան Սահակյանի կողմից նշված հանգամանքներում:

Փորձաքննությանը տրամադրված պատին ամրացված փայտե անկյունակի տեղահանվելու և դրա ամրացման հատվածներում պատի վնասվածքների հետևանքով պատճառված նյութական վնասի չափի միջին շուկայական ընդհանուր արժեքը 2018 թվականի հոկտեմբերի 16-ի դրությամբ, մինչվնասվածքային ապրանքային վիճակի հաշվառմամբ, կարող է կազմել 1000 /մեկ հազար/ ՀՀ դրամ:

Փաստի առթիվ 2018 թվականի հոկտեմբերի 26-ին ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչությունուն ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցվել է թիվ 68108618 քրեական գործը, կատարվում է նախաքննություն:

«Ախուրյանի բժշկական կետրոն» ՓԲԸ-ից ստացած գրության համաձայն Բասեն գյուղի բնակիչ Կամսար Գուրգենի Հովհաննիսյանը 01.07.1977թ.-ից հաշվառված է «Ախուրյանի բժշկական

կենտրոն» ՓԲԸ-ի հոգեբուժական կաբինետում՝ «Էպիլեպսիա՝ անձի և բնավորության փոփոխությամբ» ախտորոշմամբ:

Քրեական գործով նախաքննության ընթացքում ձեռք բերված բավարար ապացույցների համակցությամբ 2018 թվականի դեկտեմբերի 21-ին որոշում է կայացվել Կամսար Գուրգենի Հովհաննիսյանին ՀՀ քրեական օրենսգրք 258-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով որպես մեղադրյալ ներգրավվելու մասին, վերջինիս առաջադրվել է մեղադրանք և նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել Ստորագրություն չհեռանալու մասին:

Նկատի ունենալով, որ Կամսար Գուրգենի Հովհաննիսյանի հոգեկան լիարժեքությունը, մեղսունակությունը և գործի համար նշանակություն ունեցող այլ հարցեր պարզելու համար անհրաժեշտ են դատական հոգեբուժության բնագավառի հատուկ գիտելիքներ, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-245 և 248-րդ հոդվածներով.

ՈՐՈՇԵՑԻ

1. Թիվ 68108618 քրեական գործով նշանակել ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ՀՀ Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերի դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի փորձագետին:

2. Փորձագետին առաջադրել հետևյալ հարցերը.

ա/ մեղադրյալ՝ Կամսար Գուրգենի Հովհաննիսյանը նախկինում և վերը նկարագրված հանրորեն վտանգավոր արարքը կատարելու պահին հոգեկան հիվանդությամբ տառապե՞լ է, թե՞ ոչ, եթե այո, ապա ինչպիսի՞ հիվանդությամբ է տառապել և ե՞րբվանից,

բ/ եթե մեղադրյալ՝ Կամսար Գուրգենի Հովհաննիսյանը տառապել է հոգեկան հիվանդությամբ, ապա այդ հիվանդությունը զրկե՞լ է արդյոք նրան իր գործողություններին հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից,

գ/ մեղադրյալ՝ Կամսար Գուրգենի Հովհաննիսյանը ներկայումս տառապու՞մ է որևէ հոգեկան հիվանդությամբ, եթե այո, ապա ինչպիսի՞,

դ/ եթե մեղադրյալ՝ Կամսար Գուրգենի Հովհաննիսյանը տառապում է հոգեկան հիվանդությամբ, ապա այդ հիվանդությունը զրկու՞մ է նրան ներկայումս իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից, ինչպես նաև այդ հիվանդության առկայության պայմաններում վերջինս կարո՞ղ է մասնակցել դատաքննչական գործողություններին, թե՞ ոչ,

ե/ մեղադրյալ՝ Կամսար Գուրգենի Հովհաննիսյանը մեղսունա՞կ է, սահմանափակ մեղսունակ, թե՞ անմեղսունակ,

զ/ մեղադրյա Կամսար Գուրգենի Հովհաննիսյանը հարկադիր բուժման կարիք ունի՞, թե՞ ոչ, եթե այո, ապա ի՞նչ տիպի հոգեբուժական հիվանդանոցում և հակացուցված չէ՞ արդյոք բուժումը, ինչպես նաև հանրության համար վտանգ ներկայացնու՞մ է, թե՞ ոչ:

3. Փորձագետին տրամադրել քրեական գործի նյութերը և փորձաքննության նենկայացնել Կամսար Գուրգենի Հովհաննիսյանին:

4. Հանձնարարել ՀՀ Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերի դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի նախագահին՝ պարզաբանել փորձագետներին, ում հանձնարարվելու է փորձաքննության կատարումը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված՝ փորձագետի իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

5. Եթե փորձաքննության ընթացքում առաջանան հարցեր, որոնք կարող են օգտակար լինել քննության համար և որոնց պատասխանները մտնում են փորձագետի իրավասության մեջ, խնդրվում է պատասխանել նաև այդ հարցերին:

Ախուրյանի քննչական բաժնի պետի
տեղակալ, առաջին դասի խորհրդական՝ **Ս.Օ.Մինասյան**